



«ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1892


ԹԻՒ 1

ՏՕՆ ԾՆՆՆԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Քրիստոնէական երկու գլխաւ որ աօնախմբութիւնք կը պատահին յոյժ յարմար ժամանակաց մէջ: Առաջինը, որ է յեղատակութիւն Մեծապի ծննդեան, ի բեթլեհէմ այն նուազտ իջեւանին մէջ, կը տօնախմբենք խոր ձմեռուան մէջ: Այն ատեն մեր բնակարաններէն դուրս քիչ բաներ կը գտնուին հրապուրիչ: Օդը ցուրտ է և փոթորկային, ցերեկը կարծ է և զիշերը երկայն. ծառերը մերկացած են իրենց տերևները և ծաղիկք կը գտնուին իրենց գերեզմաններուն մէջ: Բայց ներսն ունինք ուրախայից խնջոցք, զուարթարար խաղեր և ջննդեան ատեն առթիւ երջանիկ ընկերակցութիւններ: Պատշաճ և վայելուչ է որ այսպիսի եղանակի մը մէջ տօնենք ծնունդն այն էակին որ իջաւ աշխարհիս հոգեւոր խաւարին և մահուան մէջ որպէս զի զՆա ընդունողներուն խաւարը լուսոյ փոխուի և մահը՝ յաւիտենական կենաց:

Միւս մեծ տօնախմբութիւնք, Զատիկը, կու գոյ գարնան մէջ երբ աշխարհ կ'արթննայ իւր ձմեռնային քունէն և ծառերը և ծաղիկները փառաւոր յարութեան մը պայծառ դարարութեամբ և գեղեցկութեամբ կը ծիծաղին: Կը զգանք թէ համայն բնութիւնը կը ձայնակցի մեզ երգել բերկրութեամբ Զատիկան երգը որ կը հռչակէ, «Քրիստոս յարեաւ ի մեռերոց»:

Ահա դարձեալ եկաւ ջննդեան տունը, և կը մտղթենք որ մեր բոլոր բնութեցողաց համար, մեծ կամ փոքր, այս տօնախմբութիւնը լինի առիթ շնորհակալութեան և երջանկութեան: Հանդերձ մեր բարեմաղթութեամբք, կը ներկայացունենք ձեզ պատկեր մը որ կը ցուցնէ թէ ի Նորվեկիա ի՞նչպէս կը տօնախմբուի Քրիստոսի ջննդն.



ԾՆՆՆԵԱՆ ՏՕՆ Ի ՆՈՐՎԵԿԻԱ

դը: Հիւզակին վրայ ցցի մը ծայրը հաստատուած է ցորենի խորձ մը, որպէս զի թռչունք անգամ մտնակցին ուրախութեանց: Ի՞նչ ձմեռնային տեսարան: Եւ սակայն կը կարծենք թէ մեր մատաղահասակ ընկերացիներէն շատեր կը փափաքին ըլլայ այն տղին նետ որ հիւզակին առջևէն կ'անցնի իւր ջմուշկները ոտքը:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ ԲԱՆՏԻՆ ՄԵՁ  
 Կին մը որ թէև կարգալ չէր գիտեր բայց ընտանեցած էր Աստուծոյ Խօսքին, կը գոչէր շուտ անգամ, «Ն՛րբ արդեօք կարող պիտի ըլլամ կարգալ Սուրբ Գիրքը. կ'ուզեմ գիտնալ թէ յայնժամ է՛նչ ազդեցութիւն պիտի ընէ այն իմ վրաս»:  
 Ահա պատմութիւն մը որ կը ցուցնէ թէ Սուրբ Գրոց մէկ մասը ի՛նչ ներ-


գործութիւն ըրաւ խումբ մը անձանց վրայ որք իրենց չափահաս լինելէն ետքը առաջին անգամ լեցին Աւետարանին պատգամը :

Ի ճափոն, իբր 1876ին Նոր Կտակարանէն մաս մը միայն — ոչ աւելի քան 2000 Աւետարանները — թարգմանուած էր ճափոնացոց լեզուին : Մր. Նիդիմա անուն միսիոնարը այդ թարգմանութեան քանի մը օրինակները և քանի մը ուրիշ քրիստոնէական գիրքեր տուաւ քաղաքի մը բանտապետին : Բանտապետը փոյթ չընելով իւր քով պահել գիրքերը, տուաւ զանոնք բանտարկեալներէն մէկուն, որ մտրդասպանութեան ուճիւր գործած էր : Այս մարդն էր ուսումնական, և շատ կը սիրէր տեսնել նոր և անձանօթ գիրքեր : Կարգաց զանոնք, սխորժեցաւ, և իւր մէջ խորապէս տպաւորուեցան ֆրիստոնէութեան ճշմարտութիւնները զորս կը տեսնէր պարզուած՝ Յիսուսի կենաց և վարդապետութեանց մէջ : Այնուհետև կարգաց զանոնք իւր բանտի ընկերներուն և կը սորվեցունէր նոր կրօնքին վրայով :

Այս բաներէն ժամանակ մը ետքը բանտին մէջ կամ շատ մօտը հրդեհ ծագեցաւ, այնպէս որ չէնքը այլ ևս չէր կրնար պահել իւր մէջ գանուողները : Հիմա սիտի տեսնուի թէ ինչ նշանաւոր ներգործութիւն ըրած էին ֆրիստոսի վարդապետութիւնք հարիւրաւոր բանտարկեալներու վրայ : Անոնցմէ և ոչ մին զանաց փոխելի, այլ ամէնքն ալ մէկ մարդու պէս աշխատեցան մարել բոցերը, և յետոյ զացին ետ՝ բանտարկուելու մինչև որ աւարտէր իրենց բանտարկութեան համար վճռուած ժամանակին մնացեալ մասը :

Այս դէպքը հետաքրքրութիւն արթնցուց թէ ինչ էր արդեօք պատճառը . ուստի քննութիւն մը կատարուեցաւ, որով հասկցուեցաւ թէ յիշեալ ուսումնականին անկեղծ հաւատքն Աւետարանին ճշմարտութեանց վրայ, և նորա անձնական ազդեցութիւնը իւր բանտարկեալ ընկերաց վրայ՝ ստիպել էին զանոնք այսպիսի անլուր ընթացք մը բռնելու :

Ուսումնականը յետոյ ներում գրանելով արձակուեցաւ բանտէն, բայց մնաց քաղաքին մէջ, նոր կրօնքին վրայ աւելի բաներ սորվեցունելու համար բանտարկեալներուն :



ՆԱԻԱԿԱՏ ԽՈՒՄԲ ՕՐՆԵԼ

ՆԱԻԱԿԱՏ ԽՈՒՄԲ ՕՐՆԵԼ

Իռլանտայի արևմտեան ծովազերաց վրայ գտնուող Պալուէյ քաղաքին մօտ է Գլատտահ գիւղը, որոյ բոլոր բնակիչք ձկնորս են : Անոնք կը տարբերին իրենց շորջ գանուող ուրիշ իռլանտացիներէն, և ոմանք կ'ըսեն թէ Սպանիական սերնդէ են : Կր պահեն իրենց հին սովորութիւններէն մէկ քանին, որոցմէ մին է պարստակով քար նետել. և քանի մը տարի առաջ հեծելազօրաց գունդ մը կազմելով զինեցին զայն այս գէնքով : Առաջիկայ պատկերը կը ներկայացունէ անոնց ձկնորսի նաւակներու խումբը զոր իրենց կաթոյիկ քահանան կ'օրհնէ ձրկնորսութեան եղանակին սկիզբը : Թերևս ունին սնապաշտական գաղափար-

ներ քահանային խօսքերուն գործութիւն ունենալու մասին . բայց իրօք աղէկ է որ անոնք սկսին իրենց ձկնորսութեան գործը աղօթք մատուցանելով այն էակին որմէ կախում ունի իրենց յաջողութիւնը : Քրիստոսի այս կերտաց նաւը այն ասան լեցուեցաւ խոշոր ձուկերով, երբ նոքա անոր հրամանին հնազանդելով իրենց ուսկանը նաւուն աջ կողմը ձգեցին :

ՄԱՅՐ ՄՈՒԿ ՄԸ

Ոսկէ քիչ ժամանակ առաջ մկանց բնասանիք մը իրենց բնակութիւնն հաստատեցին հին ծխնելոյղի մը մէջ որ չէր գործածուեր : Անոնց բոյնը ծխնելոյղին երկայնութեան մէջտեղն էր

ներ, դուրս ցցուած քարի մը վրայ :  
 Օր մը մկան ձագերէն մէկը ինկաւ բոյնէն վար տախտակամածին վրայ :  
 Նա թէպէտ էր փափուկ բան մը, միայն կաղինի չափ մեծութեամբ, չփնտրուեցաւ իւր վար իյնարովը : Հա-  
 զիւ ինկած էր տախտակամածին վրայ, մայրը վազեց իջաւ անոր քով : Բռնեց պարանոցէն և յուսահատաբար կը ջանար վեր հանել զնա ծինեղոյզին մէջ : Բայց ձագը ծանր էր իրեն համար : Երեք անգամ ջանք ըրաւ, բայց չյաջողեցաւ : Յետոյ վազեց դնաց : Բայց ոչ թէ այլ ևս լքանելու համար իւր ձագը : Քանի մը վայրկեան յետոյ ետ եկաւ իւր հետ բերելով ուրիշ մուկ մը որ բռնեց ձագը իւր պարանոցէն, մինչ մայր մուկը բռնեց զայն իւր փոքրիկ պոչէն : Այնուհետեւ երկուքը միասին քաշելով կը տանէին ձագը, և հինգ րոպէի շարաշար աշխատութենէ ետքը հասան բոյնին և ձագը սնոր մէջ դրին ապահովապէս :  
 Ո՞չ ապաքէն այս կը ցուցնէ փոքրիկ մկանց մեծ հանճարը :

ԼԻՆՆԵՍՍ

Շուեռացի այս համբաւուոր բնախօսը ծնաւ 1707 ին և մեռաւ 1778 ին :  
 Լիննէոսի հայրն էր Բողոքական քարոզիչ և կ'ուզէր որ իւր որդին ալ մանէր նոյն պաշտօնին մէջ : Բայց ծաղկանց մեծ սէրը զոր ունէր Լիննէոս պատանին, անոր ընտրել տուաւ Բուսաբանական և նման գիտութեանց ուսումը : Այնպէս ինքն ինքն մարդոց շատերուն պէս անոր առջև կը գտնուէին բազում դժուարութիւնք որոց դէմ պէտք էր մաքառել, և շատ անգամ կը ներդուէր ուսեասի և զգեստուց կուրտութենէ : Մինչև անգամ երբ Բուսաբանութեան ուսուցիչ լինելու չափ հմտութիւն ունէր, ծեր փրօֆէսոր մը իւր նախանձէն արգելեց զնա ուսուցիչ ընտրուել : Բայց Լիննէոսի հանճարը և յարաստութիւնը յաղթանակ կանդանեցին բոլոր արգելքներուն վրայ : Գնաց Հոլանտա, ուր գտաւ այն յարգը զոր ընդունած չէր իւր հայրենեաց մէջ : Երբ վերադարձաւ ի Շուեռ, կարգուեցաւ Բուսաբանութեան փրօֆէսոր Բիլհարդիի համալսարանին մէջ, և եղաւ գիտութեան այդ ճիւղին ամենէն համբաւուոր ուսուցիչն աշխարհիս մէջ : Եւրոպայի ամէն կողմերէն և Ամերիկայէ ուսանողներ կու գային սորվել անոր յարգութեամբ օտարականք կ'երթային Բիլհարդի լոկ տեսնել զնա և խօսակցել անոր հետ : Նիւթական

յաջողութիւնք և համբաւը, զոր կը վայելէր նա իւր վերջին տարիներուն մէջ, լիուրի վարձ եղան իւր նախկին ներդրութեանց և տառապանաց : Լիննէոս մեծապէս օգնած է դրութեան վերածել Բուսաբանական ուսումը, և կը նկատուի հայր Բուսաբանութեան :

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԱՓՐԻԿԷԻ ՍԵՒԱՄՈՐԹ ՄԱՆԿԱՆՑ

Հաճելի է լսել որ Պերճիոյ Լէոփոլտ թագաւորը բարի գործ մը կը կատարէ ֆոնկոյի երկրին մէջ, օրհնութիւն յիշեալ խաւար երկրին փոքրիկ մանկանց : Միտոնարք ըսած են թէ այս փոքրիկներն ի՞նչպէս շատ անգամ կը



ԼԻՆՆԵՍՍ

թափառին հոս և հոն, թէ ոչ ոք անոնց հոգ կը տանի, և թէ իրենց ապրուստին չունին միջոց, բայց եթէ պարտիլ գիւղերը կամ հաւաքուիլ անտառաց մէջ : Այն վայրերի ցեղերէն ոմանց մէջ սրբերը շատ թշուառ կեանք կ'անցունեն :  
 Քոնկոյի պետութիւնը այժմ միջոցներ ձեռք առած է այն անօգնական փոքրիկներուն օգտին համար : Լէոփոլտ թագաւոր հանած է հրովարտակ որով կը յայտարարէ թէ Պետութիւնը հոգ պիտի տանի բոլոր այն մանկանց որ գերեզմանաց ձեռքէն առնուելով ազատ հոշակուած են, և ուրիշ այնպիսի մանկանց՝ որ երեսի վրայ թողուած են կամ չունին հոգացող : Պետութիւնը պիտի տայ անոնց դործնական դատարարութիւն մը, և պիտի սորվեցունէ անոնց՝ հայրթայրել իրենց ապրուստը շրջակայ սպիտակամորթ ժողովրդոց մէջ : Ազարակներ պիտի

հիմնուին ուր երկրագործութիւն սորվին անոնք, և մինչև որ լինին չափահաս, կառավարութիւնը պիտի հոգայ անոնց ուսեաստը, բնակարանը, դեղը և ամէն պիտոյքը : Այսպէս, այն ընդարձակ երկրին մէջ, ուր որ ֆոնկոյի պետութիւնը հաստատած է կայաններ, այսուհետեւ այս փոքրիկներէն հարիւրաւորներ պիտի գտնեն քաղաքակրթութեան օգնող ձեռքը մինչ տկար են :

Հոս կը գնենք օրինակ մը թէ ֆոնկոյի պետութիւնն ի՞նչ կ'ընէ սեւամորթ տղայոց և աղջկանց համար : Վերին ֆոնկոյի մէջ, Պէնկալա կոչուած տեղը, սպիտակամորթ ընդարձակ կայան մը կայ այն մարդակերներուն մէջերը որք տարիներ առաջ սաստկապէս կուտեցան Սթէնլիի հետ երբ սա կ'իջնէր մեծ գետէն : Քոնկոյ գետոյն հիւսիսային եղերաց երկայնութեամբ իրը քսան մղոն տեղոյ վրայ կը բնակին իրը 100,000 բնիկք : անոնց խրճիթները իրարու կից և կարգ կարգ շինուած էին և կը ձևացունէին բազում մղոններով երկայնութեամբ փողոցներ : Հարկաւ բնակութեան այսպիսի ընդարձակ կեդրոնի մը մէջ կը գտնուին շատ մանուկներ որք որ և իցէ կերպով զուրկ մտացած են զիրենք ինամուղներէ :

Եթէ այսօր այցելենք յիշեալ տեղը, սպիտակամորթից այն ընդարձակ կայանին մէջ պիտի գտնենք երկու կարգ մաքուր խրճիթներ, ուր այս մանկանք կը բնակին հանգիստ : Խրճիթներու այս շարքերուն մէջտեղերը կը գտնուի ընդարձակ շէնք մը, ուր կը կենան երկայն սեղան մը և նստարաններ : Հոն օրն երեք անգամ Պետութեան վերաբերեալ 120 փոքրիկ աշակերտներ կը նստին ի ճաշ, սպիտակամորթներէն մէկուն հսկողութեան ներքեւ : Իզգած է ժամանակ երբ անոնք կ'ուտէին այնչափ յաճախ որչափ կրնային, երբեմն կը նեղուէին չափազանց լցունելով իրենց ստամբոցը, այնուհետեւ դարձեալ անօթի կը մնային երկար ժամանակ : Այժմ իրենց կերակուրը կ'ընդունին կանոնաւոր ժամանակներու մէջ և բաւական չափով ճուն մը յատկացուած է հրեանոցնէ, ուր մասնաւոր պատրաստութիւնք եղած են, և փոքրիկ հիւանդները շուտով կը բժշկուին լաւ խնամք տարուելով անոնց : Գժախտ մանկանց օգտին համար ֆոնկոյի պետութեան այժմ կատարած գործը ստուգիւ Լէոփոլտ թագաւորին մարդասիրական ձեռնարկութեանց ամենէն հաճելին է :

ՓՈՒՐԻՆԳ ԹԱԳՈՒՀԻՆ

Հոլանտայի վիճակներն թագուհին է շատ սիրուն փոքրիկ աղջիկ մը տաննուձեկ տարեկան և ամենուն սրբելի : Անգղիացի մը որ հիւրընկալուեցաւ արքայական պալատին մէջ, շատ հաճոյական տեղեկութիւն մը կուտայ Հոլանտայի թագաժառանգ իշխանուհոյն սիրուն կերպերուն վրայ : Օրիորդ վիճակներն այնպէս խնամով կրթութիւն ընդունած է որ մինչև հիմա չխորհիր իւր վրայ թէ քան իւր ընկերները բարձր է որ և ինչէ իմաստով, իւր ընկերական հակամիտութեանց վրայ հետեւեալը կը պատմուի :

Բարձրագոյն կարգի սպատարներէ միայն դուստրը կը դիտէր ինչոք մը զոր տուած էր վիճակներն իւր բարեկամաց : Սիշեալ աղջկան մտքերը պէտք ունէին քիչ մը շուկուելու : Վէլհէլմինայի սուր աչքը իսկոյն անասաւ և հասկցաւ զոյր : Առանց սորսելու որ կանչէր սպատարը մը, մոնրահասակ իշխանուհին շատով վեր, իւր անեւակը, տարաւ աղջիկը, և բուն իւր ձեռքը շտիկցն մտքերը և կուտայ իւր ամենէն գեղեցիկ ժապատէններէն մէկով : Երբ աւարտեց, տուաւ անոր իւր գործածած անտորը և յետոյ երկուքը վար իջան այնպէս երջանիկ ինչպէս կրնան ըլլալ սոցոք :

«Վայերուչ չէր ձեզ թողու հիւրերը», ըսաւ իւր վարժուհին :

«Վայերուչ չէր Սոփիայի այնպէս այլանդակ երևնալ, ուստի անոր համար շտկեցի մտքերը : Հիմա կրնայ զբօսնուլ, բայց երբեք չէր կրնար զբօսնուլ այդպիսի գլխով», պատասխանեց վիճակներն :

Վիճակներն կ'ուզէ իւր գործերն ինք ընել, և քիչ անդամ կը շեղի այս ընթացքէն բայց եթէ հսկողութեան ներքեւ ըլլալով : Կը տոգոհայ երբ կը հակեն իւր վրայ : Երբ սորվեցաւ թիափարեւ և գեկափարեւ, գոհ չեղաւ մինչև որ կարող չեղաւ իւր նաւակն ինք կառավարել լօսի լծակներուն մէջ :

«Ինչու համար միտակ կ'ուզես երթալ», հարցուեցաւ անոր :

«Վասն զի», պատասխանեց, «կ'ուզեմ մտածել բաներու վրայ, և խօսիլ իմ անձի հետ, և շինել պատմութիւններ և ոտանաւորներ : Ես երբեք չեմ կրնար ընել այս բաները երբ հսկողութեան ներքեւ կը գտնուիմ» :

Վիճակներն մեծ հաճոյք կը զգայ բացթողնայ տեղեր խաղալէ : Զինաւ

գնտակ խաղալու մէջ շատ ճարպիկ է և չկայ իւր հաւասարը : Օր մը երբ դուրսը բալխիրով կը շրջէր իւր մօր հետ, ճամբուն վրայ հանդիպեցան փողոյի մանկունք որք իրարու ետեւ վազելով կը զբօսնուին : Իշխանուհին իւր մօրմէն հրաման խնդրեց ընկերանալ անոնց հետ : մայրը հրամայեց որ կեցունէին բալխիրը, և փոքրիկ աղջկան թող տուաւ ընկերանալ մանկանց այն երջանիկ խուճիքն հետ : Կատարեալ կէս ժամ խաղաց վիճակներն, և երբ դարձեալ մտաւ բալխիրը, անոր զուարթ ընկերաց կեցցէի աղաղակները կը բուռնէին :

Վիճակներն մեծ զգուանք կը զգայ անապարծ անձանց դէմ, այնպէսեաց որ իրենք զերենք փոռաւոր ցուցնել կ'ուզեն, և անշուշտ պիտի յայտնէ իւր արհամարհանքն այնպիսի բաներու դէմ երբ առիթը ներկայանայ : Ըստ ուստանոց է. կը խօսի և կը կարգայ Անգղիերէն և Գաղղիերէն : Ցակտուն դաս շառնուր Գերմաներէն :

Թերևս օր պիտի գայ երբ պիտի լսենք թէ վիճակներն եղած է մատենադիր, վասն զի փոքրիկ աղջիկը որ կը սիրէ առանձին մնալ, մտածել բուն իւր խորհրդոց վրայ, խօսի իւր անձին հետ, շինել պատմութիւններ և բանաստեղծութիւններ : անշուշտ պիտի յաջողի ժամանակէ մը ետքը գրել կարգալու արժանի բաներ :

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՂԱԿՆԻ ՄԸ

Ի Սան Ֆրանչիսկոյ բնակող անձ մը, անդամ «Եսաղաղականի Ափանց Աղանուոյ Ընկերութեան», շատ պատճառներ ունի սքանչանալու թղթատար աղանեաց վրայ : Իւր գործանոցը հինգ մղոն հեռի է անէն : Օր մը իւր փոքրիկ աղան յանկարծ հիւանդացաւ և կը ցուցնէ կեղծամաշկութեան (բուլիմիա) ստակաի նշաններ : Տղային մայրը միջոց չունենալով բժիշկ կանչել, թղթի մը վրայ գրեց աղային վիճակը և կապելով զայն աղանուոյն, այն սրաթուիչ պատուամատրին, սարանոցը, արձակեց զնա որ երթար իւր էրկանը : Մարդը կարգաց թուղթը, դիմեց բժշկի, ընդունեց փոքրիկ շիշով դեղ, և զայն աղանուոյն պարանոցը կապելով զովեց դեղը գործածեղու հրահանգին հետ իւր կնոջ : Աղանին արագ թուաւ դէպի առն, և անոր տասն մղոնի ճամբորդութիւնը միայն քսան վայրկեան տեւած էր, շատ մը ատելի նուազ ժամանակ քան որչափ պիտի անցնէր

գետնին վրայ կառքով ճանապարհորդելով : Այս արագ գործողութեամբ անշուշտ աղատուեցաւ աղային կեանքը, և դիւրաւ կրնանք երևակայել թէ որչափ սիրելի էր այդ ընտանիքին այն սրաթուիչ և իմաստուն փոքրիկ թուշուրը :

ԼՈՂԱԼՈՎ ԵԿԵՂԵՑԻ ԵՐԹԱԼ

Նիանկանտի անունով աղջիկ մը, որ կը բնակէր Արեւմտեան Ափրիկէի Օկոյի գետոյն մօտ, շարաթ օր մը իւր նաւակով եկաւ Գեթի կոչուած ուտելի բոյսի երկու խուրճով՝ զանոնք միսիոնարոց ծախելու համար : Երբ ետ կը դառնար, Տիկին Գեշլըր, միսիոնարին կիներ, ըսաւ անոր, «Գետք չէ որ մտնաս թէ վաղը կիրակի է, և դուն արդէն խոտացած ես եկեղեցի գալ ամէն անգամ» : «Այո», ըսաւ աղջիկը, «անշուշտ կու գամ, եթէ ողջ ըլլամ» : Աղջիկն իւր խօսքը պահեց, բայց ոչ ոք գիտէր թէ ինչպէս հասած էր հոն, մինչև որ պաշտաման աւարտելէն ետքը ըսաւ աղջիկներուն թէ գիշերը գողցուած էր իւր նաւակը, և թէ իւր բարեկամներէն ոչ ոք իւրը կ'ուզէր փոխ տալ իրեն, բայց ինք խոտացած էր եկեղեցի գալ, և զգաց թէ պէտք էր որ վար : Ուստի լողացած էր բոլոր ճամբան : Հոսանքն արագ էր և ջուրը խոր, և գեալ մէկ երրորդ մղոն լայն, բայց արամանկուն ուղղութեամբ լողալով յաջողած էր գետոյն մէկ եզրէն միւսն անցնիլ :

Եթէ այս աղջիկը, որ Աւետարանին վրայ ունէր քիչ մը գիտութիւն միայն, կրնար այսքան ներութիւն յանձն առնուլ սրպէս զի պահէր իւր խօսքը և պատուէր կիրակին, որչափ ևս առաւել քրիստոնեայք պարտին պահել չորրորդ և իններորդ պատուիրանները :

Ամերիկայի Միսիոնարաց Ընկերութեան կողմէն, Արտօգրքի Կոմիտէն Տնօրէն—Կ. Պ. ՊԱՐՆԸՄ Ֆրանսիսկոյ Երկրային Գործերու Խան



ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆ  
Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՅՈՐ ԳՈՅԱՆՅԱՆ